ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2019թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի հ.41-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ մասով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Տիգրան Մեծի հ.53 հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքի (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 13.03.2006թ. հ.2179853 վկայական) 199.1քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 10 /տասը/ տարի ժամկետով տրամադրել «ՀԱՅ ՄԱՅՐԵՐ» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Տիգրան Մեծի հ.53 հասցեում գտնվող 199.1քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 10 տարի ժամկետով տրամադրել «ՀԱՅ ՄԱՅՐԵՐ» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

Տիգրան Մեծի հ.53 հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքը, համաձայն անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 13.03.2006թ. հ.2179853 վկայականի, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

«ՀԱՅ ՄԱՅՐԵՐ» բարեգործական հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2012 թվականին: Կազմակերպությունն նպատակն է աջակցել մանկական ուղեղային կաթված ախտորոշում ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին:

Կազմակերպության հիմնական գործառույթներն են՝ հասարակության ուշադրությունը հրավիրել մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների և նրանց ծնողների խնդրին, բարձրացնել համանման ընտանիքների իրազեկության մակարդակը, ցուցաբերել հոգեբանական աջակցություն, պաշտպանել նրանց շահերը, աջակցել նրանց ընտանիքների համայնքային ինտեգրման հարցում, ապահովել երեխաներին անհրաժեշտ վերականգնողական թերապիաներով (կինեզիո, արտ, ջրային, էրգոթերապիա, բուժական մերսում, լոգոպեդ և հոգեբան), հատուկ օրթոպեդիկ կոշիկներով և վերականգնողական հատուկ գույքով (սայլակ, կանգնակ, քայլակ): Կազմակերպությունն աջակցում է մանկական ուղեղային կաթվածով հաշմանդամություն ունեցող թվով 270 երեխաների, որոնք ապրում են կարիքավոր ընտանիքներում:

Այս կազմակերպությունը համագործակցում է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի, «ՎՏԲ» բանկի, «Ernst&Young» ՓԲԸ-ի, «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ-ի, Իդրամ համակարգի, ՀՀ առողջապահության նախարարության, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի և մի շարք այլ հեղինակավոր կազմակերպությունների հետ:

Քննարկվող տարածքը կազմակերպությունը նախատեսում է օգտագործել որպես ներառական մանկապարտեզ-վերականգնողական կենտրոն, որտեղ կկարողանան հաճախել 2-6 տարեկան՝ ինչպես խնդիրներ ունեցող, այնպես էլ առողջ երեխաներ, իսկ կենտրոնի աշխատակիցների մեծ մասը լինելու են հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողները: Նախատեսվում է ունենալ երեխաների երկու խումբ՝ 2-4 տարեկանների և 4-6 տարեկանների համար՝ յուրաքանչյուր խմբում ունենալով 10-15 երեխաներ:

Կազմակերպությունը նպատակ է հետապնդում նաև մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաներին տրամադրել վերականգնողական բուժում՝ ներառական ծրագրով և ստեղծել երեխաների զարգացման նոր մոդել:

Ելնելով վերոգրյալից և կարևորելով «ՀԱՅ ՄԱՅՐԵՐ» բարեգործական հասարակական կազմակերպության գործունեությունը, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում վերոնշյալ տարածքի նկատմամբ կազմակերպության անհատույց օգտագործման իրավունքը 10 /տասը/ տարի ժամկետով ձևակերպելու հարցը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ